ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2022 թվականի հունվարի 8-ին Արմավիրի համայնքապետարանում կազմակերպվեց Արմավիր համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում, որին մասնակցում էին Արմավիր համայնքի ավագանու անդամներ, Արմավիր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, ՀԼՄ ներկայացուցիչներ: Բյուջեի նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանը: Նա նշեց, որ 2022 թվականին Արմավիր համայնքի բյուջեի եկամուտները կազմում են 2091514.0 հազար դրամ, ծախսերը՝ 2518827.3 հազար դրամ: 2022 թվականին ավելի մեծ ծավալի շինարարություն է արվելու Արմավիր խոշորացված համայնքում՝ մասնավորապես նախատեսվում է իրականացնել Արմավիր քաղաքի Մ.Գորկի փողոցի հիմնանորոգման, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան և Լենուղի գյուղերի ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, թիվ 3 և թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ների ջեռուցման համակարգի կառուցման, գազաֆիկացման, հին դռների և պատուհանների նորով փոխարինման, Արաքս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, գազաֆիկացման և ջեռուցման համակարգի կառուցման, Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցման, Լուկաշին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի օդափոխության և ջեռուցման համակարգերի կառուցման, Սարդարապատ գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, գազաֆիկացման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ:Նշվեց, որ շարունակական աշխատանքներ են տարվելու քաղաքի տարբեր փողոցների լուսավորության համակարգի վերականգնման ուղղությամբ:

Քննարկման ընթացքում կարևորվեց պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությունը և շեշտը դրվեց սուբվենցիոն ծրագրերով 2022 թվականին համայնքում իրականացվելիք ծրագրերի ապահովմանը: Հնչեցին հարցեր, տրվեցին պատասխաններ:

Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց Արմավիր համայնքի ազգաբնակչությանը, որ համատեղ աշխատանքի, իրենց կողմից հարկային պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու միջոցով մեծ մասնակցություն են ցուցաբերում համայնքում իրականացվող բազմաբնույթ ծրագրերի կյանքի կոչմանը՝ նպաստելով համայնքի շարունակական զարգացման ծրագրերին:

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԸ